

Մելքոնյան Ա - Առանց մեկնաբանության – թերթ, «Հայաստանի
Հանրապետություն», Ե., 25.09.1999

«Բորենիների խրախճանքը»՝ Սոււգայիթն է: «Հեթանոս Հայաստանը»՝ կարող էինք և այդպիսին լինել: «Վերածնունդը»՝ ծովերը թող այդ կապույտով ծով լինեն...

Արամ Իսաբեկյանի բացատրությունները զարմանալիորեն հակիրճ և ամենաասաց էին: Գեղանկարչի այդ կերպն ինձ դուր եկավ. կոկիկ, սափրված, փողկապով: Վերջին ժամանակներս Երևանի ցուցասրահներն այդքան մարդաշատ չէին եղել. Երեխաներ, ուսանողներ, նախարարներ: Նշանակում է՝ կենցաղային հոգսերից չխեղդվեցինք ու... կարիք ունենք: Գեղեցիկը գնահատելու կարիքը:

Արամ Իսաբեկյանը ծնվել է 1952թ. Երևանում: 1976-ին ավարտել է Երևանի գեղարվեստա-թատերական ինստիտուտի գեղանկարչության բաժինը: 1979-ից դասավանդում է նույն ինստիտուտում: Նրա նկարները հանգրվանել են ազգային պատկերասրահում, Երևանի ժամանակակից արվեստի և Մոսկվայի Տրետյակովյան թանգարաններում, բազմաթիվ անհատական հավաքածուներում:

Սովորականի նման ու լրագրողի սովորությամբ այս անգամ չես լսի ոչ ցուցահանդեսի բացման խոսքը, ոչ շնորհավորանքները: Դանդաղ կանցնես սրահներով. կկանգնես «Ազոավով կնոջ» առջև: Դառը վավով օրեր՝ կանցնի մոքովդ: Եվ այդպես՝ կտավներ շարունակ: Ինքդ քեզ տված բացատրություններն էլ գեղանկարչի բացատրությունների նման հակիրճ կլինեն. «Կինը և ասպետը»՝ կինն ամեն տարիքում էլ իր ասպետին է սպասում. «Մերկը»՝ կինը մերկ վիճակում էլ մերկ չէ. «Լքված ջրաղաց»՝ լքված քարն էլ կքվում է:

...Հետո ինչ-որ լրագրողի հարցից կսթափվես ու սովորականի նման կվերսկսես աշխատանքը...

«Ասում են՝ նկարիչը հասարակության շահերն է արտահայտում, ո՛ր, նկարիչը սեփական ապրումների ու տեսիլների արտահայտողն է: Ուզում է ազատվել ապրումներից ու ծնվում է նկարը. կնոջ գեղեցկություն, ազոավի ողբերգություն... Նկարչությունը բացատրելու համար չէ: Արվեստաբաններն են բացատրում: Իզուր: Մարդիկ հոգնել են արվեստում աճապարարությունից: Իսկականին ու իրականին վերադառնալու ցանկություն կա: «Ինձ շատ, շափազանց շատ դուր եկան վենետիկյան շարքի նատյուրմորտները» (նկարիչ Վարուժան Վարդանյան):

«Նրա ամեն մի նատյուրմորտը մի նովել է, բայց ես դիմանկարները հավանեցի: Հեռու եմ կտավներն ինչուներով մեկնաբանելուց: Նկարն ընկալվում է: Եթե զգացիր, պետք չէ մտածել, թե՛ ինչու» (դերասան Խորեն Աբրահամյան):

«Արամը գնահատեց ծնողների արվեստը, բայց գնաց ուրույն ճանապարհով: Կարծում եմ ամեն ինչ պարզ է, և ավելին ասելու կարիքը չկա» (նկարիչ Սարգիս Մուրադյան):

«Եթե ինձ մոտեցել եք, ուրեմն ինչ-որ բան զգացել եք, ուրեմն ինչ-որ բանի հասել եմ» (Արամ Իսաբեկյան):

«Ես ծաղիկներով նատյուրմորտ եմ սիրում, բայց, ա՛յ, ա՛յն մեկը՝ շշերովը, հիանալի է, նկարչի ամենահաջողված գործերից է:

Չեմ մեկնաբանի... Չէ՛, բայց շշերովն ուրիշ էր» (ՀՀ տարածքային կառավարման նախարար Խոսրով Հարությունյան):